ՀՀ Զինված Ուժերում վարժական հավաքների մասնակիցների շրջանում իրականացված հարցումների արդյունքները

The Black Sea Trust for Regional Cooperation

A PROJECT OF THE GERMAN MARSHALL FUND

Ուսումնասիրությունն իրականացվել է German Marshall հիմնադրամի ներքո գործող տարածաշրջանային համագործակցության Black Sea Trust ծրագրի ֆինանսավորմամբ:

© Վանաձոր, Հայաստան 2023 – 2024

Բովանդակություն

Ներածություն 2
Մեթոդաբանությունը 2
Հարցման մասնակիցները 2
Վարժական հավաքին մասնակցության ծանուցումը և զորակոչի գործընթացը 2
Բժշկական զննությունը մինչև վարժական հավաքի ուղարկվելը 3
Ուսուցումը և մասնագիտությունը վարժական հավաքի ժամանակ 4
Վարժական հավաքների ընթացքում կացության պայմանները 5
Կարգուկանոնը վարժական հավաքի ընթացքում 8
Առողջապահությունը և կոնֆլիկտային իրավիճակների կառավարումը վարժական հավաքների ընթացքում 9
Զենքն ու զինամթերքը վարժական հավաքի ընթացքում 10
Զբաղվածությունը և ֆինանսական հետևանքները 11
Մասնակիցների վերաբերմունքը վարժական հավաքներին 12
Ամփոփում 15
Առաջարկներ 16

Ներածություն

Ավելի քան 10 տարի շարունակ «Խաղաղության երկխոսություն» հկ-ի գործունեությունը նվիրված է ՀՀ զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի բարձրաձայնմանը: 2015թ.-ից ի վեր կազմակերպության մշտադիտարկող խումբը մանրակրկիտ վերահսկում և գնահատում է այս ոլորտը: 2023թ.-ի հուլիսից սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում ԽԵ մշտադիտարկող խումբն իրականացրել է մի շարք հարցումներ, որոնց գլխավոր թիրախ նրանք էին, ովքեր տարբեր ժամանակահատվածներում մասնակցություն են ունեցել վարժական հավաքներին: Հարցումները նպատակաուղղված էին վարժական հավաքների ընթացքում մարդու իրավունքների վիճակը բացահայտող համապարփակ արդյունքների հավաքագրմանը:

Մեթոդաբանությունը

Հարցումն ընդգրկում էր աշխարհագրական լայն շրջան՝ տարածվելով Երևանի ամբողջ տարածքով և ՀՀ գրեթե բոլոր մարզերով, բացառությամբ Արագածոտնի և Արմավիրի մարզերի: Հարցազրույցներն անցկացվել են նախապես մշակված մեթոդաբանության հիման վրա կազմված հարցաշարի կիրառմանաբ՝ դեմ առ դեմ և հեռախոսազանգերի միջոցով:

Հարցման մասնակիցները

Հարցման 45 մասնակիցներն ընտրվել են ՀՀ տարբեր մարզերից, քաղաքներից և գյուղերից: Հարցվածները պարտադիր զինվորական ծառայությունն անցել են 1996թ.-ից մինչև 2021թ.-ն ընկած ժամանակահատվածում՝ Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի տարբեր զորամասերում: Մասնակիցների գերակշիռ մասը վաժական հավաքներին մասնակցել է 2023թ.-ին, երեքը՝ 2022թ.-ին, իսկ երկուսը 2021թ.-ին:

Վարժական հավաքին մասնակցության ծանուցումը և զորակոչի գործընթացը

Հարցման արդյունքում պարզ դարձան այն բոլոր եղանակները, որոնցով մասնակիցները ծանուցումներ են ստացել վարժական հավաքների մասին: Հարցվածների գերակշիռ մասը՝ 29 հոգի (65%), ծանուցագիր է ստացել: Հաղորդակցման այլ տարածված մեթոդները ներառում էին հեռախոսազանգերը, որոնք կազմել են 18% (8 մասնակից), իսկ 6 մասնակից (13%) ծանուցագրեր ստացել են տեղական ինքնակառավարման մարմինների կողմից: Միայն մեկ դեպքում մասնակիցը ծանուցումն ստացել է աշխատավայրից:

Ծանուցում ստանալու եղանակ	%	Մասնակիցների քանակ
Պաշտոնական ծանուցագիր	66	29
Հեռախոսազանգ	19	8
ՏԻՄ	13	6
Աշխատավայր	2	1

Գր. 1 Վարժական հավաքներին մասնակցության ծանուցագրերի ստացման եղանակները



Ինչ վերաբերում է ծանուցագիր ստանալու և զորակոչվելու միջև ընկած ժամկետներին, ապա հարցման արդյունքում պարզ դարձավ, որ ծանուցվելուց հետո վարժական հավաքներին զորակոչվել են ամենաուշը մեկ ամիս, իսկ ամենաշուտը՝ երկու օր անց:

> *«Զինկոմիսարիատ ներկայացել եմ ծանուցագիրը ստանալուց մեկ օր անց, իսկ հավաքին զորակոչվել եմ հաջորդ օրը»: (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2022թ.-ի հոկտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Զինկոմիսարիատ ներկայանալուց հետո ինձ ուղարկել են բուժզննման, որից 3 օր անց կանչել են զինկոմիսարիատ»: (Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, 2023թ.-ի ապրիլին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Ասել էին, որ սպասեմ իրենց զանգին, որից 15 օր անց տարել են զինկոմիսարիատ»: (Լոռու մարզ, գ. Լեռնապատ, 2023թ.-ի մարտին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Բժշկական զննությունը մինչև վարժական հավաքի ուղարկվելը

Մասնակիցների մեծ մասը՝ 89% (40 մասնակից), նախքան վարժական հավաքներին զորակոչվելն անցել է բժշկական զննություն, մինչդեռ 11%-ը (5 մասնակից) ոչ մի զննություն չի անցել:

40 մասնակիցներից 10-ը (25%) բուժզննում անցել են բացառապես զինկոմիսարիատներում, իսկ մյուսներին ուղարկել են նաև հիվանդանոցներ և համաբուժարաններ՝ մանրամասն բուժզննում անցնելու համար: Նշված 40 մասնակիցներից 5-ը նշել է, որ մանրակրկիտ բուժզննում է անցել, 7 մասնակից նշել է, որ բժշկական զննությունը թռուցիկ է եղել, իսկ 2 մասնակից գոհ է եղել բժշկական զննության ընթացքից: Մասնակիցների մնացած մասը հավելյալ մեկնաբանություններ չի թողել:

> *«Դժվար է դա բժշկական զննություն անվանելը. պոլիկլինիկայում հագիվ թոքերը լսեցին»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի օգոստոսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Ես հիվանդանոց գնացել և մասնագետի խորհրդատվություն ստացել եմ իմ հաշվին»: (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2023թ.-ի ապրիլին անցակցված վարժական հավաքի մասնակից)*

> *«Զինկոմիսարիատում ինձ ուղարկեցին Վանաձորի բժշկական կենտրոն և տեղեկանք տվեցին հիվանդանոցում լրացնելու համար: Զննման արդյունքում պարզվեց, որ առողջական խնդիրներ չունեմ: Բժշկական կենտրոնի անձնակազմը լրացրեց տեղեկանքը և վերադարձրեց ինձ»: (Լոռու մարզ, գ. Լեռնապատ, 2023թ.-ի մարտին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Ուսուցումը և մասնագիտությունը վարժական հավաքի ժամանակ

Հարցման մասնակիցների մեծ մասը՝ 98% (44 մասնակից), նշել են, որ վարժական հավաքների ընթացքում պարբերաբար վերհիշել և սովորել են կարևոր հմտություններ և գիտելիքներ, ինչպիսիք են զենքի հետ վարվելու կարգը, զինվորական ծառայության կարգապահական կանոնագիրքը և այլն: Միայն մեկ մասնակից (2%) նշել է, որ նման պարբերական հիշեցումներ չեն եղել:

Վեց հարցվող մանրամասն նկարագրել է վարժական հավաքների ընթացքը: Նրանցից մեկը խոսել է վերապատրաստումների խիստ գրաֆիկի մասին՝ նշելով, որ օրական 2 ժամ տրամադրում էին զենքի հետ վարվելու կանոնները սովորելուն: Այս վերապատրաստումները հատկապես օգտակար էին նրանց համար, ովքեր բացարձակ տեղեկացված չեն եղել զենքի տարբեր տեսակների մասին:

Մեկ այլ հարցվող նշել է վերապատրաստման տասնօրյա ծրագրի մասին, որին մասնակից է եղել: Այն ընդգրկել է նաև կրակային վարժություններ:

Մեկ մասնակից նշել է, որ նա նման զորավարժությունների կարիք չի ունեցել:

Դեռ ավելին, 2 այլ մասնակիցներ նշել են, որ իրենք նախքան ծառայության անցնելն են մասնակցել վարժական հավաքներին, ինչն օգնել է նրանց պատրաստ լինել նախքան դիրքեր գնալը:
Հարցվածներից մեկը կարևոր նկատառում է արել՝ նշելով, որ նույնիսկ առանց պարբերական վերապատրաստումների, պատերազմի պատճառով որոշ հմտություններ և գիտելիքներ երբեք չէին կարող մոռանալ:

Ինչ վերաբերում է վարժական հավաքների տևողությանը, մասնակիցներն ասել են, որ դրանք միջինում տևել են 21-30 օր: Այնուամենայնիվ, մասնագիտական հմտությունները զարգացնելու համար հատկացված ժամանակն այլ է եղել՝ 1-15 օր: Սա նշանակում է, որ որոշ դեպքերում մասնագիտական հմտությունները զարգացնելու համար հատկացվել է մեկ կամ երկու օր:

Հարցումներից պարզվել է, որ պարտադիր ժամկետային ծառայության ընթացքում ձեռք բերված մասնագիտությունը վարժական հավաքների ժամանակ մասնակիցների կեսի դեպքում (45 հարցվածից 22-ը) հաշվի է առնվել և ներգրավվել է վարժանքների մեջ: Մնացած մասնակիցների դեպքում, սակայն, նրանց նախկինում ձեռք բերված մասնագիտական կարողությունները հաշվի չեն առնվել:

Վարժական հավաքների ընթացքում կացության պայմանները

Վարժական հավաքների մասնակիցները ներկայացրել են նաև, թե ինչպիսի պայմաններում է եղել հավաքի ընթացքում տրամադրված կացարանը, դրա սանիտարահիգիենիկ վիճակը, ջրի հասանելիությունը: 44 հարցվածների պատասխաններն այս հարցին բավականին տարբեր են. 5 մասնակից (11%) կացության պայմանները գնահատել են շատ լավ, 7 մասնակից (16%)՝ լավ, 23 մասնակցի (51%) համար պայմանները գոհացնող էին, 6 հարցվող (13%) պայմանները գնահատել են վատ, իսկ 3-ը (7%)՝ շատ վատ: Հարցվողներից մեկը հրաժարվել է կացության մասին հարցին պատասխանել:

Կացարանի գնահատական	%	Մասնակիցների քանակ
Շատ լավ	11	5
Լավ	16	7
Գոհացնող	51	23
Վատ	13	6
Շատ վատ	7	3
Չկա պատասխան	2	1

Գր. 2 Մասնակիցների կարծիքները կացարանի վերաբերյալ



> *«Չնայած զորամասում եղած շատ լավ պայմաններին՝ դիրքերում սանիտարահիգիենիկ պայմանները վատն էին. քրքրված վրաններում էինք քնում, 10 օր շարունակ չէինք կարողանում լվացվել և միայն խմելու ջուր ունեինք»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Կացարանը խոնավ էր ու ցուրտ, բայց, բարեբախտաբար, ջուր կար: Հաշվի առնելով մեկ սենյակում տղամարդկանց մեծ քանակը և մաքրողների բացակայությունը՝ սանիտարահիգիենիկ պայմանները չէին կարող լավը լինել»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Ես բավականին գոհ եմ մեր կացարանից. ամեն բան լավ էր թե՛ հարմարավետության, թե՛ սանիտարահիգիենիկ պայմանների առումով»: (Երևան, 2023թ.-ի մայիսին անցկացված վարժական հավաքների մասնակից)*

Ինչ վերաբերում է մարտական դիրքերի կահավորմանը, հարցվածների պատասխաններից պարզվեց, որ դիրքերից մի քանիսում քնելու տեղերը քիչ են եղել

զինվորների թվից: Քնելու տեղերի անբավարարության պատճառով մասնակիցները հերթով են քնել ու չեն կարողացել բավականաչափ հանգստանալ: Ավելին, որոշ դիրքերում, չնայած վերջերս իրականացված բարեփոխումներին, զուգարանը և լվացվելու համար նախատեսված պայմանները վատն են եղել: Հաճախ հավաքների մասնակիցներն իրենք են կահավորումն իրականացրել: Հարցվողներից մեկը, մասնավորապես, ընդգծել է քնապարկերի գործածումը: Այս դժվարություններից բացի կային նաև որոշ դրական կողմեր, օրինակ՝ քարե շինությունների առկայությունը այնտեղ մնալու համար, բունկերային նոր համակարգը, ինչպես նաև եղել են անհրաժեշտ կահավորմամբ դիրքեր: Կահավորման ընթացիկ աշխատանքներ են տարվել այս տարածքների ընդհանուր կահավորումը և պայմանները բարելավելու համար:

> *«Պայմանները վատն էին. մահճակալները չէին բավականացնում բոլորին, իսկ ընդհանուր տարածքն ավելի քիչ մարդկանց համար էր նախատեսված, ինչի պատճառով տեղաշարժի խնդիր էր առաջանում»: (Լոռու մարզ, գ. Լեռնապատ, 2023թ.-ի ապրիլին անցկացված վարժական հավաքների մասնակից)*

Վարժական հավաքների ընթացքում սննդի վերաբերյալ կարծիքները մեծամասամբ դրական են եղել.

- Հարցվողների մեկ երրորդի (15 մասնակից կամ 33%) համար սնունդը շատ լավն էր և համեղ:
- 9 մասնակից (20%) գոհ եղել սննդից:
- Մասնակիցներից 4-ը (9%) նշել է, որ ուտելիքն առատ էր, անգամ ավելցուկ էր մնում:
- 2 մասնակից (5%) նշել են, որ ազատ էին իրենց ցանկացած ուտելիքը պատրաստելու հարցում:
- 11 հարցվող (24%), սակայն, այդքան էլ գոհ չէ ուտելիքի որակից:
- Երեքը (7%), մասնավորապես, նշել են, որ սնունդը մարտական դիրքերում վատն էր և, որ դիրքերում իրենց բերած սնունդն էին ուտում:
- Վարժական հավաքի մասնակիցները բացասական են համարել, որ մարտական դիրքերում չոր/պահածոյացված սնունդ է տրվել: Նրանցից մեկը նույնիսկ նշել է, որ դրա պատճառով ստամոքսի ցավեր էր ունենում:

Ընդհանուր առմամբ, չնայած հարցվողների մեծամասնությունը դրական կարծիք է հայտնել ուտելիքի մասին, որոշ խնդիրներ դիրքերում սննդի վերաբերյալ, այնուամենայնիվ, բարձրաձայնվել են:

> *«Զորամասում ուտելիքը լավն էր, սակայն իրավիճակն այլ էր մարտական դիրքերում, որտեղ հիմնականում տալիս էին չոր/պահածոյացված սնունդ: Անձամբ ես ստամոքսի ցավեր եմ ունեցել դրա պատճառով: Շատերի համար սովորական էր դիրքերում իրենց բերած սնունդն ուտելը, որի ծախսերն իրենք էին հոգում»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքների մասնակից)*

Կարգուկանոնը վարժական հավաքի ընթացքում

Մշտադիտարկող խումբը վարժական հավաքների մասնակիցներին հարցրել է հավաքի ընթացքում օրվա կարգացուցակի մասին: Հարցվածներն ավելի հաճախ նշել են, որ հավաքներն իրականացվել են նախապես մշակված օրակարգով: Որոշ մասնակիցներ օրվա ընթացքում ծանրաբեռնված են եղել, մյուսները քիչ զբաղված: Օրվա կարգացուցակի կազմակերպումը տարբեր էր. ոմանց համար այն լավ էր կազմակերպված, մյուսները կարծում էին, որ անկազմակերպ էր, ինչի պատճառով մասնակիցներն իրենք էին կազմում իրենց օրակարգը: Մարտական դիրքերում, սակայն, ավելի հստակ օրակարգ կար:

Մասնակիցները տարբեր կարծիքներ են հայտնել վարժական հավաքների ընթացքում իրենց օրակարգի մասին.

> *«Մեր օրը սովորաբար սկսվում էր դասերով, որից հետո մեծամասամբ ազատ էինք»: (Երևան, 2023թ.-ի օգոստոսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Օրակարգը մանրամասն կազմված էր, ինչպես իսկական զինվորական օրակարգ: Դասերը, ուտելիքը, ամեն ինչն իր ժամանակին էր արվում, առանց ուշացումների»: (Տավուշի մարզ, ք. Բերդ, 2023թ.-ի հունիսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Ըստ օրակարգի՝ 4 ժամ դիրք էինք պահում, որից հետո 4 ժամ հանգստանում էինք. այսինքն 24 ժամվա ընթացքում յուրաքանչյուրս 3 հերթափոխ էինք իրականացնում»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ-.ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Մշտադիտարկող խումբը հարցրել է՝ արդյո՞ք վարժական հավաքների ժամանակ մյուս մասնակիցները և սպաները ոգելից խմիչքներ ու թմրամիջոցներ օգտագործել են, թե՞ ոչ: Հարցվածներից 30-ը (67%) համածառայակիցների վերաբերյալ դրական են արտահայտվել՝ նշելով, որ ոգելից խմիչքի կամ թմրամիջոցների օգտագործում չի եղել: Մյուս կողմից, 15 մասնակից (33%) ընդգծել է համածառայակիցների կողմից դրանց օգտագործումը:

Սպաների կողմից ոգելից խմիչքներ ու թմրամիջոցներ օգտագործելու հետ կապված հարցին գերակշիռ մեծամասնությունը (36 հոգի, 80%) ասել է, որ չեն օգտագործել, 6 մարդ (13%) նշել է, որ որոշ սպաներ օգտագործել են թե՛ ոգելից խմիչք, թե՛ թմրամիջոցներ:

> *«Ոգելից խմիչք միայն երեկոյան էինք օգտագործում»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Ոգելից խմիչքներ օգտագործում էին, և գրեթե բոլորն էլ խմում էին: Չեմ կարծում, թե թմրամիջոցներ օգտագործած լինեն. ես չեմ նկատել»: (Արարատի մարզ, ք. Վեդի, 2023թ.-ի հունիսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Սպաների կողմից ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների օգտագործման վերաբերյալ հարցվածների մեծ մասը նշել է, որ նման դեպքեր չեն նկատել: Ընդգծել են միասնականության ուժեղ զգացումը, հատկապես որևէ բան տոնելու ժամանակ, երբ ոգելից խմիչքներ էին օգտագործվում: Ընդհանուր առմամբ մտերմիկ մթնոլորտ էր՝ մի ընտանիքի նման, բոլորը հավասար էին՝ անկախ տարիքից ու պաշտոնից, ինչը նպաստում էր միասին ժամանակն ավելի արագ անցկացնելուն: Մասնակիցներից մեկը խոստովանեց, որ բոլորն էլ ոգելից խմիչքներ շատ էին օգտագործում, այդ թվում՝ նաև իրենք:

Ինչ վերաբերում է վարժական հավաքների ընթացքում սմարթֆոնների կիրառմանը, հարցվողների պատասխանները տարբեր են. նրանցից 13-ը (29%) ասել են, որ իրենց թույլատրվում էր սմարթֆոններ օգտագործել, մինչդեռ 31 մասնակից (69%) նշել են, որ սմարթֆոնների օգտագործումն արգելված էր: Հարցվողներից մեկը չի պատասխանել այս հարցին: Մասնակիցները հավելեցին նաև, որ չէր թույլատրվում նկարել, նկարահանել և սոցցանցերում տեղադրել: Չորս հարցված (9%) պատասխանել է, որ չնայած արգելքներին, իրենք միևնույնն է օգտագործել են սմարթ հեռախոսներ: Մասնակիցներից մեկը հստակ չգիտեր օրենքը, բայց ասել է, որ ունեցել է սմարթֆոն: Եվս մեկ հարցված ասել է, որ եթե հեռախոսները չլինեին, ձանձրույթից, հնարավոր է, վեճերն ավելի շատ կլինեին:

Հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ 38 հոգի (84%), նշել է, որ զորամասի տարածք քաղաքացիական անձինք ելումուտ չունեին, իսկ 7-ը (16%), որ ունեին: Ըստ հարցվածների տված հավելյալ տեղեկությունների՝ ընկերներ, ծանոթներ, հարազատներ կարող էին գնալ զորամաս տեսակցության և անհրաժեշտ որևէ բան տանել տեսակցության հատուկ օրերին կամ միայն դիրքեր բարձրանալուց մեկ օր առաջ: Նրանք նաև նշել են, որ որոշ դեպքերում զինվորները կարող էին դուրս գալ հարազատներին ու ընկերներին հանդիպելու համար: Հարկ է նշել, որ միայն մեկ հարցվող է ընդգծել, որ նման այցելությունները չէին թույլատրվում զորամասում, իսկ մյուսն էլ նշել է, որ զորամասի ներսում նման այցելությունները բավականին հաճախ են եղել:

Առողջապահությունը և կոնֆլիկտային իրավիճակների կառավարումը վարժական հավաքների ընթացքում

Վարժական հավաքներին մասնակցած 45 հարցվածների գերակշիռ մեծամասնությունը՝ 37 հոգի, նշել է, որ առողջական խնդիրների դեպքում զորամասի տարածքում ապահովված էր պատշաճ բուժօգնությունը: Մյուս կողմից, 7 հոգի դժգոհություններ է հայտնել իրենց զորամասում ցուցաբերվող բուժօգնությունից: Հարցվողներից մեկը խուսափել է պատասխանել հարցին:

Մի քանի հարցված հավելյալ մեկնաբանություններ են թողել զորամասում և մարտական դիրքերում բուժօգնության որակի վերաբերյալ.

> *«Նույնիսկ երբ մեզ լավ էինք զգում, շրջիկ մեքենան մի քանի օրը մեկ գալիս էր, հարցնում առողջական վիճակի մասին»: (Լոռու մարզ, գ. Լեռնապատ, 2023թ.-ի ապրիլին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Մասնակիցներից մեկն առողջական խնդիրներ ուներ և մենք օգնություն կանչեցինք, սակայն բուժօգնություն չուղարկեցին՝ ասելով, որ տվյալ դիրքը շատ հեռու է, և մեքենան չի կարող այդքան ճանապարհ կտրել-գալ»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Նորմալ դեղորայք չկար բացի պարացետամոլից ու մի երկու վիրակապական միջոցից»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Վարժական հավաքների ժամանակ մթնոլորտը հասկանալու համար մշտադիտարկող խումբը նաև հարցրել է՝ արդյոք հավաքի մասնակիցների միջև վեճեր տեղի են ունեցել: Մեծամասնությունը՝ 35 հոգի (78%), ասել, է որ վեճեր տեղի չեն ունեցել, իսկ 10 հոգի (22%), որ նման միջադեպեր եղել են:

Հարցվածներից 5-ը (11%) հստակեցրել է, որ հիմնականում թեթև վեճեր են եղել, 2-ը (4%), որ մթնոլորտը շատ լավն էր՝ մի ընտանիքի նման: Մեկ այլ հարցվող ընդգծեց հասուն տղամարդ լինելու իրականությունը՝ նշելով, որ հաճախակի թյուրըմբռնումներն անխուսափելի էին, այնպես որ վեճերն ու նույնիսկ կռիվները չէին բացառվում:

Վեճերի հիմնական պատճառների մասին հարցվածներն ասել են, որ հիմանականում իրար չէին հասկանում, ու «տղամարդկային վեճեր» էին: Նման խնդիրները հիմնականում հարթվում էին խոսելով ու քննարկելով: Շատ հաճախ՝ հատկապես սկզբի օրերին, թեթև լեզվակռիվներ, վիճաբանություններ, տարակարծություններ կարող են լինել: Եղել են նաև տարաձայնություններ քաղաքական քննարկումների պատճառով:

Մարտական դիրքերում վարժական հավաքների ընթացքում մահվան դեպքերի կամ ծանր վիրավորումների մասին հարցին 42 մասնակից (93%) պատասխանել են, որ նման դեպքեր չեն գրանցվել: Հարցվածներից միայն մեկն է նշել, որ վարժական հավաքներին իր մասնակցության ընթացքում մարտական դիրքերում վիրավորման դեպք է գրանցվել, սակայն մանրամասներ չի հայտնել: Երկու մասնակից հրաժարվեցին պատասխանել հարցին:

Զենքն ու զինամթերքը վարժական հավաքի ընթացքում

Հարցվածների մեծամասնությունը՝ 40 մասնակից (89%), նշել է, որ վարժական հավաքի ընթացքում զենքի և զինտեխնիկայի անսարքության կամ սակավության հետ չի առնչվել: Հինգ մասնակից ասել է, որ բախվել են զենքի անսարքության կամ սակավության հետ: Հարցվածների մի մասը նշել է, որ իրենց մոտ բոլորի թվով զենքեր տրվել են, սակայն մյուս

մասն ասել է, որ իրենց մոտ զենքերը, փամփուշտները և հավելյալ մյուս սարքավորումները պակաս են եղել: Մեկ մասնակից նշել է, որ հնարավորություն չեն ունեցել դրանք օգտագործելու, որպեսզի կարողանային գնահատել զենքի վիճակը:

> *«Մեր ամբողջ զենք-զինամթերքը նոր էր և վերջերս էինք ստացել»: (Լոռու մարզ, ք. Վանաձոր, 2023թ.-ի ապրիլին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Չունեինք գիշերային տեսանելիության սարքեր, իսկ զրահաբաճկոնների և սաղավարտների թիվը սահմանափակ էր»: (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2022թ.-ի հոկտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Ամեն ինչ էլ կար, միայն թե դրանցից օգտվել իմացող լիներ»: (Տավուշի մարզ, ք. Բերդ, 2023թ.-ի հունիսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Աշխատող մեքենաների պակաս կար. միայն մեկ UAZ կար, բայց նույնիսկ դա էլ կարգին չէր աշխատում»: (Լոռու մարզ, գ. Մարգահովիտ, 2023թ.-ի ապրիլին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Զբաղվածությունը և ֆինանսական հետևանքները

45 մասնակիցներից 29-ը (65%) վարժական հավաքներին մասնակցելու ժամանակ աշխատանք է ունեցել, 11 մասնակից (24%) գրանցված աշխատող չի եղել, իսկ 5 մասնակից (11%) այդ ժամանակ գործազուրկ է եղել:

Զբաղվածություն	%	Մասնակիցների թիվ
Աշխատող	65	29
Չգրանցված աշխատող	24	11
Գործազուրկ	11	5

Այն 32 մասնակիցները, ովքեր վարժական հավաքների ժամանակ աշխատանք ունեին, պետք է տեղեկանք ներկայացնեին աշխատավայրում: Նրանց մեծամասնությունը (25 մասնակից (78%)) հաստատել է, որ ստացել է նման տեղեկանք, իսկ 7-ը (22%)՝ չի ստացել: Տեղեկանքներն ընդունվել են գրեթե բոլորի աշխատավայրերում, բացառությամբ մեկի:

Մասնակիցների մեծամասնությունը՝ 39 հոգի (87%), վարժական հավաքների ընթացքում վարձատրվել է, իսկ 6 մասնակից (13%) փոխհատուցում չի ստացել: Փոխհատուցում չստացածները նշել են, որ վարձատրությունն ակնկալում են մոտ ապագայում, քանի որ նոր են վերադարձել հավաքներից:

Այն հարցին, թե արդյոք վարժական հավաքների ընթացքում ֆինանսական կորուստներ ունեցել են, թե՝ ոչ, 18 մասնակից (40%) հաստատել է, որ հավաքներին իրենց մասնակցության պատճառով ֆինանսական կորուստ են ունեցել, մինչդեռ 27 մասնակից (60%) նման կորուստներ չի կրել: Ֆինանսական կորուստներ կրածները նշել են, որ իրենց կողմնակի աշխատանքը, որը վարժական հավաքների ընթացքում չի փոխհատուցվում, մեծ դեր ունի իրենց ֆինանսներում: Որոշ մասնակիցներ նշել են, որ ավելի շատ գումար

աշխատած կլինեին, քանի որ փոխհատուցումն ավելի քիչ էր իրենց աշխատավարձից: Մեկ մասնակից նշել է, որ վարժական հավաքներին իր մասնակցության դիմաց ավելի շատ գումար է ստացել, քան իր սովորական աշխատավարձն է:

Գր. 3 Զբաղվածությունը վարժական հավաքների ընթացքում



> *«Նրանց տված գումարն իմ ամսական աշխատավարձից ցածր էր: Սկզբում մեզ ուրիշ թիվ էին ասել, իսկ վերջում ուրիշ տվեցին:» (Լոռու մարզ, գ. Լեռնպատ, 2023թ.-ի ապրիլին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Հաշվի առնելով, որ ես չգրանցված եկամուտ ունեի՝ ընտանիքս, իհարկե, զրկվել էր եկամտի այդ աղբյուրից:» (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2022թ.-ի վարժական հավաքի մասնակից)*

Մասնակիցների վերաբերմունքը վարժական հավաքներին

Հարցվածները գնահատել են վարժական հավաքների դրական կողմերը, այդ թվում՝ դրանց արդյունավետությունը, հավաքների գործընթացի մեջ ներառված զինվորական աշխատակազմի պատրաստվածությունը, ինչպես նաև իրենց իսկ պատրաստվածությունը հավաքների ավարտից հետո: Հավաքների ընդհանուր արդյունավետությունը 19 մասնակից (42%) գնահատել է լավ, ևս 19 մասնակից (42%)՝ միջին, իսկ 7 մասնակից (16%) վատ է գնահատել: Որոշ մասնակիցներ նաև կիսել են իրենց կարծիքն այդ մասին.

> *«Վատ էր, որովհետև իրականում այն վարժական հավաքները չէին, որ պատկերացնում էի: Մարդիկ գալիս էին խմելու ու գումար ստանալու: Ասուած չաներ մի բան պատահեր. ոչ ոք ողջ չէր մնա»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի ապրիլին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Արդյունավետ էր: Կարծում եմ վերապատրաստումները լավ էին կազմակերպված»: (Երևան, 2023թ.-ի մայիսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Միջին եմ գնահատում: Հնարավորինս արդյունավետ՝ կախված այն բանից, թե ով ինչքան վերցրեց»: (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2022թ.-ի հոկտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Անձնակազմի պատրաստվածության մասին հարցին մասնակիցների պատասխանները տարբեր էին: 17 մասնակից (38%) նշել է, որ անձնակազմն իր գործում լավ պատրաստվածություն ուներ: Եվս 17 մասնակից (38%) պատրաստվածությունն անբավարար է գնահատել: Ավելին, 4 մասնակից (9%) նշել է, որ անձնակազմի մեծ մասը հմուտ մասնագետներ են եղել, բայց ոչ բոլորը: Հարցվածների մի փոքր մասը՝ 2 մասնակից (4%), միջին գնահատական է տվել պատրաստվածության մակարդակին: Վերջապես, 5 մասնակից (11%) դժվարացավ հստակ պատասխան տալ հարցին:

Պատրաստվածության մակարդակը	%	Մասնակիցների թիվը
Պրոֆեսիոնալներ էին	38	17
Պրոֆեսիոնալիզմի պակաս կար	38	17
Անձնակազմի մեծ մասը պրոֆեսիոնալներ էին, բայց ոչ բոլորը	9	4
Միջին պատրաստվածություն ունեին	4	2
Դժվարանում են հստակ պատասխան տալ	11	5

Գր. 4 Մասնակիցների կարծիքները անձնակազմի պատրաստվածության վերաբերյալ



> *«Ոչ, նրանք պատշաճ պատրաստվածություն չունեին: Նրանցից մեկը նույնիսկ առաջին անգամ էր գնդացիր տեսնում»: (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2021թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Անձնակազմում արդեն թոշակի անցած սպաներ կային, որոնք պատշաճ պատրաստվածություն ունեին, և ոմանք նույնիսկ հիանալի մասնագետներ էին»:*

> *(Շիրակի մարզ, գ. Մայիսյան, 2023թ.-ի սեպտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Մշտադիտարկող խումբը մասնակիցներին հարցրել է՝ արդյոք վարժական հավաքները պատշաճ կերպով նախապատրաստել են իրենց հնարավոր իրական սցենարներին: Հարցվածներից 20-ը (44%) գտել է, որ վարժական հավաքներն իրենց նախապատրաստել են պատերազմի կամ մարտական գործողությունների հնարավոր իրական սցենարներին: 13 մասնակից (29%) հակառակ կարծիքն ունեին և ասում էին, որ հավաքները բացարձակ ոչ մի կերպ չեն նախապատրաստել իրենց նման իրավիճակներին, մինչդեռ 6 մասնակից (13%) որոշ չափով նախապատրաստվել են հավաքների շնորհիվ: Չորս հարցվող (9%) ամբողջովին պատրաստ է եղել նման իրական սցենարների՝ անգամ առանց վարժական հավաքների: Եւս երկու մասնակից (5%) վստահ չէին՝ արդյոք հավաքները պատշաճ կերպով նախապատրաստել են իրենց, թե՞ ոչ:

> *«Ես իրական սցենարների եմ ականատես եղել պատերազմի ժամանակ, իսկ այս հավաքները ոչ մի նման սցենարի չեն նախապատրաստել»: (Սյունիքի մարզ, ք. Կապան, 2023թ.-ի հոկտեմբերին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *«Ոչ ամբողջությամբ. հավաքները պատշաճ կերպով չեն նախապատրաստում ժամանակակից պատերազմներին: Սովորական զենքերն անարդյունավետ են ԱԹՍ-ների դեմ»: (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2022թ.-ի օգոստոսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Հարցվողները պետք է նաև գնահատեին վարժական հավաքների դրական կողմերը: Նրանցից 30-ը (67%) հավաքների մեջ դրական էր համարում նախկինում ստացած գիտելիքի կրկնությունը և նոր կարողությունների ձեռքբերումը: Սրան հակառակ, վարժական հավաքների 8 մասնակից (18%) ոչ մի դրական կողմ չի նշել: Ավելին՝ 6 մասնակից (13%) հավաքների միակ դրական կողմը համարել է սահմանների և հայրենիքի պաշտպանությունը: Ի վերջո, մեկ մասնակից (2%) ընդգծել է վարժական հավաքների դրական ազդեցությունը բանակում մի փոքր ավելի կարգուկանոն հաստատելու գործում:

Այն հարցին, թե արդյոք մասնակիցները ևս մեկ վարժական հավաքի կմասնակցեին, թե՞ ոչ, և ինչո՞ւ, հարցվողների պատասխանները տարբեր էին: Նրանց մեծ մասը՝ 17 մասնակից (38%) նշել է, որ չեն մասնակցի վարժական ևս մեկ հավաքի: Սրան հակառակ, 15 մասնակից (33%) պատրաստակամություն է հայտնել մեկ անգամ ևս մասնակցել հավաքներին: Ութ մասնակից (18%) նշել է, որ կմասնակցեն, եթե դրա կարիքը լինի, մինչդեռ 3 մասնակից (7%) հնարավոր է մասնակցեն միայն բարելավված պայմանների դեպքում: Երկու մասնակից (4%) վստահ չէին իրենց մասնակցության հարցում:

> *«Ես չէի մասնակցի, որովհետև անարդար է. միշտ նույն մարդիկ են մասնակցում: Ո՞վ է ասել, որ մենք պարտավոր ենք մասնակցել, իսկ մնացածը մեզնից առավել են ու պարտավոր չեն»: (Լոռու մարզ, գ. Լեռնապատ, 2023թ.-ի հունիսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

> *"Ես կմասնակցեի. պարբերաբար մասնակցելը կարևոր է, բայց ես կնախընտրեի տարբեր տիպի վարժական հավաքների մասնակցել, այլ ոչ*

> *նույնին:”* (Երևան, *2023թ.-ի հունիսին անցկացված վարժական հավաքի մասնակից*)

> *«Վստահ չեմ, բայց, եթե կարիք լինի, անպայման կրկին կմասնակցեմ»: (Շիրակի մարզ, ք. Գյումրի, 2023թ.-ի մայիսին անցկացված վարժական հավաքի մասնակից)*

Մշտադիտարկող խումբը հարցում է անցկացրել հետագա հավաքները բարելավելու եղանակների վերաբերյալ, և ամենաշատ հանդիպող պատասխանները հետևյալն էին.

- 10 մասնակից նշել է զենք-զինամթերքի քանակական ավելացումը և բարելավումը,
- 10 մասնակից նշել է խստության մակարդակի բարձրացումը,
- 10 մասնակից նշել է տարբեր զինատեսակների հետ վարվելու նոր գիտելիքների ու փորձառությունների ուսուցումը,
- 6 մասնակից նշել է ավելի լավ պատրաստվածություն և պրոֆեսիոնալիզմ ունեցող սպաների ներգրավվածությունը հավաքներին,
- 7 մասնակից առաջարկել է բարձրացնել վարձատրությունը,
- 5 մասնակից նշել է մարտական դիրքերում ընդհանուր պայմանների բարելավումը,
- 3 մասնակից բարձրաձայնել է կացարանային պայմանները բարելավելու խնդիրը,
- 3 մասնակից նշել է խտրական մոտեցումը դադարեցնելու հարցը՝ անընդմեջ նույն (խեղճ) մարդկանց չտանել հավաքներին, այլ ներառել բոլորին,
- Մասնակիցների համար սահմանել տարիքային շեմ. մեկ մասնակից առաջարկել է ամենամեծ տարիքը սահմանել 40-ը,
- 1 մասնակից առաջարկել և պնդել է վարժական հավաքներն ավելի հաճախ իրականացնել:

Ամփոփում

Վարժական հավաքների վերաբերյալ հարցումը նշանակալի արդյունքներ է տվել մի շարք հիմնական ոլորտներում: Վարժական հավաքներին մասնակցության մասին մեծ մասը տեղեկացվել է ծանուցագրով: Այն ստանալու և զորակոչվելու միջև ընկած ժամկետները տարբեր էին: Նախքան հավաքները բժշկական զննություն անցնելը սովորական էր մասնակիցների շրջանում. տարբեր էին միայն բուժզննումների անցկացման վայրը և կարգը: Գրեթե բոլոր մասնակիցները վերապատրաստումներ են անցել կարևոր թեմաներով, չնայած դրանց տևողությունը և մասնագիտական շեշտադրումը տարբեր էին: Հավաքների ընթացքում կեցության պայմանները նույնպես տարբեր էին. մասնակիցները նշել են թե՛ դրական, թե՛ խնդրահարույց և բացասական կողմեր:

Ռազմական կարգուկանոնը տարբեր էր, սակայն հիմնականում պատշաճ կերպով կազմակերպված օրակարգ կար: Զորամասում առողջության պաշտպանության վերաբերյալ դրական կարծիքներ են արձանագրվել, չնայած որոշ մասնակիցներ նշել են, որ բժշկական պարագաների սակավություն կար: Զինամթերքի և զինտեխնիկայի

խնդիրները հազվադեպ էին: Տարբեր արդյունքներ են ստացվել նաև հավաքների ընթացքում զբաղվածության վերաբերյալ. մասնակիցների զգալի մասը նշել է ֆինանսական կորուստներ ունենալու փաստը:

Տարբեր կարծիքներ են հայտնվել հավաքների արդյունավետության, աշխատակազմի պատրաստվածության մակարդակի և իրական սցենարներին նախապատրաստվածության վերաբերյալ: Դրական կողմերից նշվել են գիտելիքի կրկնությունը, նոր կարողություններ սովորելը և հայրենիքի պաշտպանության զգացումը: Հետագա հավաքներին կրկին մասնակցություն ունենալու մասին հարցվածների պատասխանները կիսվում են. եղել են բարելավումների առաջարկություններ, այդ թվում՝ զինամթերքի քանակական ավելացում, ավելի խիստ պայմաններ, սպայական կազմի ավելի լավ պատրաստվածություն, ավելի բարձր վարձատրություն և բարեկարգված կացարաններ:

Եզրափակելով՝ հետազոտությունն ընդգծում է վարժական հավաքների տարբերվող բնույթը՝ բացահայտելով ինչպես դրական կողմերը, այնպես էլ բարելավման ենթակա ոլորտները: Հարցումների արդյունքներն ընդգծում են համատեքստին հատուկ բարեփոխումների կարևորությունը՝ վարժական հավաքների ծրագրերի արդյունավետությունն ու լավ որակը օպտիմալացնելու համար:

Առաջարկներ

- Համագործակցել բժշկական հաստատությունների հետ բուժզննության որակը բարելավելու համար՝ անդրադառնալով մակերեսային ստուգումների վերաբերյալ մասնակիցների կողմից բարձրացված մտահոգություններին:
- Վարժական հավաքների ծրագրերը հարմարեցնել մասնակիցների մասնագիտական հմտություններին՝ ապահովելով նրանց լիարժեք ներգրավվածությունն ու մասնագիտական կարողությունների կատարելագործումը:
- Ավելի երկար ժամանակ հատկացնել մասնագիտական հմտությունների զարգացմանը, որպեսզի մասնակիցներն իրենց համապատասխան մասնագիտություններում ավելի համապարփակ վերապատրաստումներ անցնեն:
- Պատշաճ կահավորել մարտական դիրքերը, այդ թվում՝ կացարանները, ապահովել անհրաժեշտ պարագաներով, որպեսզի զինծառայողները հնարավորություն ունենան քնելու, լիարժեք հանգստի և կարողանան արդյունավետ իրականացնել հերթափոխը:
- Ձևակերպել օրվա հստակ կարգացուցակ կարգուկանոնը պահելու համար՝ հաշվի առնելով օրակարգի մասին մասնակիցների կարծիքները:
- Սպաների համար իրականացնել հավելյալ վերապատրաստումներ կարգուկանոնը և պատրաստվածությունը բարելավելու համար՝ անդրադառնալով զինվորական անձնակազմի պրոֆեսիոնալիզմի բացակայության մասին մասնակիցների մտահոգություններին:

- Զորամասերում ապահովել բժշկական պարագաների բավարար քանակ՝ անդրադառնալով սահմանափակ ռեսուրսների և որոշակի իրավիճակներում առողջության պաշտպանության վերաբերյալ մասնակիցների մտահոգություններին:
- Իրականացնել կոնֆլիկտների լուծմանն ու սթրեսի կառավարմանն ուղղված ծրագրեր մասնակիցների շրջանում վեճերը նվազագույնի հասցնելու համար՝ հաշվի առնելով պատահական վեճերի և ծեծկռտուքի դեպքերը:
- Իրականացնել պարբերաբար ստուգումներ զենք-զինամթերքի սակավությունից և անսարքությունից խուսափելու համար՝ անդրադառնալով մի քանի մասնակիցների կողմից այդ մասին արտահայտած մտահոգություններին:
- Ներդրումներ կատարել զինանոցի թարմացման և ընդլայնման մեջ՝ բոլոր մասնակիցների կարիքները բավարարելու համար, որպեսզի հավաքների ընթացքում բոլոր մասնակիցները համապատասխան սարքավորումներ ունենան:
- Մշակել մասնակիցների փոխհատուցման հստակ քաղաքականություն՝ հաշվի առնելով նրանց կանոնավոր զբաղվածությունը և հնարավոր ֆինանսական կորուստները՝ համապատասխան փոխհատուցում ստանալու վերաբերյալ մասնակիցների մտահոգությունները լուծելու համար:
- Սահմանել հետադարձ կապի կանոնավոր մեխանիզմ, որպեսզի մասնակիցները կարողանան արտահայտել իրենց հուզող հարցերը և կարծիքները՝ նպաստելով վարժական հավաքների ծրագրի շարունակական բարելավմանը:
- Սահմանել վերապատրաստումների ծրագրերի դիվերսիֆիկացման եղանակներ տարբեր խավերի մասնակիցների համար՝ անդրադառնալով մասնակիցների ընտրության մեջ անաչառության վերաբերյալ մտահոգություններին:
- Պարբերաբար վերանայել և թարմացնել վերապատրաստումների ուսումնական ծրագրերը, դրանք համապատասխանեցնել ռազմական ժամանակակից մարտահրավերներին՝ խթանելով շարունակական բարելավումը:

Նշված առաջարկությունների իրականացումը կնպաստի վարժական հավաքների ընդհանուր արդյունավետությունը, անաչառությունը և մասնակիցների գոհունակությունը բարելավելուն: Ըստ մասնակիցների կարծիքների՝ իրականացվող ընթացիկ գնահատումները և ճշգրտումները վճռորոշ նշանակություն ունեն այս ծրագրերի համապատասխանությունն ու որակը ժամանակի ընթացքում ապահովելու համար: